

ՊՐՈՖ. Ա. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԻԹՈՎ*

Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի հոդվածը՝ Սայաթ-Նովայի «Այբբբիմըն» խաղի նոր վերծանության փորձի մասին, վերջին 34 տարիների ընթացքում բանասերների կողմից առաջարկվող երևի 10-րդ տարբերակն է:

Իհարկե, տրամաբանական կլիներ երգչի այս չափածո զրույց-խաղի աղավաղված (իմ որդի Օհանի կողմից) տողի՝ «Հասա րա է, հասա ջե..., հասա սէ» պակասող մեկ վանկը նախապես լրացնել և թիվ արտահայտող ջե-ն (900) դարձնել չա (700), ինչպես նաև վրացատառ րա-ն կարդալ ո (1000), որովհետև վրացերենում ո հնչյունը չկա: Ես առաջարկել էի (1943 թ.) ջ-ն փոխել չ-ի և ավելացնել մեկ տառ՝ տասնավոր թիվ արտահայտող ծա (50), որ ստացվի ՌԶԾ (1750): Բայց խաղի մեջ ասված է «հասա րա է...»:

Եթե սլրոֆ. Աբրահամյանը մերժում է է նշանը ընդունել որպես թիվ (7), այն համարելով սոսկ օժանդակ բայ, ապա պետք է, նախապես, նույն այս տողի պակասող վանկը լրացնել, հետո անցնել երկրորդ տողին:

1943 թ. մենք վերականգնել էինք այդ տողը և լրացրել պակասող վանկը, դնելով ծա տառանշանը, որ 50-ի համարժեքն է: Սրանով ստացվում է «Հասա Ռա է, հասա Չա, Ծա, հասա սէ»: Եթե է տառանշանը տվյալ դեպքում ընդունենք որպես օժանդակ բայ, ինչպես առաջարկում է պրոֆ. Ա. Աբրահամյանը, ապա կստացվի ՌԶԾ (1750), որից հետո «Սայաթ-Նովա, տարիտ էլավ քառասուն»-ը թելադրում է, որ վերին տողի 1750-ից պետք է հանենք 40-ը և կստացվի, որ երգիչը ծնվել է 1710 թ.: Բայց սրա հետևս համաձայն չէ հեղինակը, որովհետև երկու տարով պակաս է ավանդաբար ընդունված տարեթվից (1712), իսկ երեք տարով ետ է պրոֆ. Աբրահամյանի առաջարկած 1713 թ.: Ուստի հաջորդ տողում նա «ստանում է» ծա (50) և սխալ ստեղծված կիմ (դարձնելով գիմ/3), որից գոյանում է ՌԶԾԳ=1753—40=1713: Եթե բանասերը համաձայն է ծա նշանը ստեղծելուն, ապա առանց բանասիրական փշոտ թփուտների մեջ մտնելու, առանց աղճատելու երրորդ պարզ ու հստակ տողը, պետք է երկրորդ տողում ծա-ով լրացնել պակասող վանկը և ոչ թե օժանդակ մի հավելյալ է բայ ստեղծել (Չա է): Ավելի տրամաբանական կլիներ ավելացնել ծա (50), որով երգչի ծննդյան տարին կդառնար 1710 (1750—40): Կամ թե ծ-ի փոխարեն կարելի էր գրել կ (60), որով տողը կդառնա «Հասա Ռա է, հասա Չա կեն հասա Սե», իսկ թվական արժեքը՝ 1760: Սրանով երգչի ծնունդը կլինի 1720 թ.: Սակայն այս դեպքում ևս ի՞նչ վերաբերմունք պետք է ունենալ է տառի նկատմամբ: Այն պետք է ընդունենք օժանդակ բա՞յ, ինչպես առաջարկում է նաև պրոֆ. Աբրահամյանը (մեկ հատ էլ ավելացնելով իր կողմից՝ Հասա Չաէ): Սայաթ-Նովան ինչպե՞ս կարող էր

* Պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի հոդվածը ժամանակին դրախոսել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, հանգուցյալ Մ. Հասրաթյանը: Խմբագրությունը ավելորդ չի համարում ներկայացնել այդ գրախոսականը (խմբ.):

գրել «Հասա Ռա է» (եթե կա հասա բայը, ապա նա չէր ավելացնի է օժանդակ բայը, որը նույնիսկ չի ենթադրվում): Հենց այս լեզվական անտրամաբանությունն է, որ երգիչը, խախտելով նաև հայոց տոմարի մեջ ընդունված կարգը, հաղարավորի և հարյուրավորի արանքում ավելացրել է սովորական վերջադիր տեղ ունեցող միավորի նշաններից ե կամ է տառը (=5, 7): Այս հավելումն է, որ կարող է դարձնել 1755 կամ 1757: Բայց եթե լիներ ե, կգրվեր հասա Ռա եչ, մինչդեռ գրված է է (վրացական այբուբենը չունի ե—եչ, այլ միայն է), այդ պատճառով, և այլ փաստերի թելադրությամբ, մենք այդ է-ն ընդունեցինք որպես միավորի նշան՝ է և ստացվեց 1757:

Անընդունելի է պրոֆ. Աբրահամյանի կողմից երրորդ հստակ տողի ավերումը, որպեսզի ստացվի «Անգրը Մա կիմ է», հետո էլ այդ կիմ-ը դարձվում է գ (գիմ), որպեսզի ստացվի 3 (=1753) և երկու ծնունդը դուրս բերվի 1713 թ.: Այստեղ անհրաժեշտ է հիշել, որ Սայաթ-Նովան գրել է բաղաձայնները պահպանած թիֆլիսահայ բարբառով, որի մեջ գիմ-ը գիմ է հնչում և ոչ կիմ: Եթե այս ավերված պարզ տողի հաջորդ տողը ևս մեջտեղ բերվեր, ապա ընթերցողի հարցերը կշատանային, որովհետև վերջին տողը ամուր հաստատում է նախորդ 3-րդ տողի անվիճելի, կայուն դիրքը՝ «Մե ձեն եկավ դասե դաս, անգան կալա՝ չիմացա ինչ հա՛սա է»: Այսինքն՝ հանկարծ, անսպասելի մի ձայն եկավ (իրար հաջորդելով), ականջ դրի, բայց չիմացա թե ինչ կանչի ձայն է:

Զշարունակենք: Վերը ասացինք, որ երևի 10-ի կհասնեն այս երկրորդ տողի վերջանման փորձերը, որոնք, գրեթե բոլորը, հրապարակված են: Կարծում եմ ճանաչված բանասեր-գիտնականի այս մեկ յուրօրինակ նոր վարկածն էլ կարելի է տպագրել: Առաջարկված շատերից մեկը ճշմարիտ ու անվիճելի կդառնա ժամանակին: Բայց ես, 34 տարի հետո էլ, մնում եմ այն հաստատ համոզմունքին, որ, անկախ այս գրգռիչ, շատ ջուր վերցնող տողից, անմահ երգիչը ծնված պետք է լինի 1717/1718 թ., գարնան մի օր՝ Զատկին: